

rev. Père G. Kalemkorian
tengasce № 4
Michitaris
Vienne

ՊՈՒԿԱՐԻԱ
Ե Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր

Տարեկան 12 Ձր.
Վեցամսեայ 6 Ձր.

ԱՐՏԱՍԱՀԱՐԱՆ

Երկու քիչ մեկ ծրարով

Տարեկան 14 Ձր.
Վեցամսեայ 7 Ձր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տոլ.
Վեցամսեայ 1.50 Տոլ.

Կ Ա Ն Ի Կ

ԽԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ

20 ՄԵՐ.

ԱՂԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ 2ՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ՀԱՅ ՊԱՊԱԿԱՆՆԵՐԸ

Արտաքին ազդեցութիւններու տակ և խաբուսիկ խոստումներէ շրացած մաս մը ազգայիններու Հայաստանեայց եկեղեցւոյ գիրկէն բաժնուած ըլլալը ազգային միութեան տեսակետով ցաւալի դէպք մըն էր անշուշտ, որուն համար մեր նախնիքը չափազանց ազդուած են ժամանակին, գուշակելով որ նոր բացուիլ սկսած խրամաւոր կրնայ յառաջիկային այնչափ ընդլայնուիլ որ ազգին մէկ հատուածը կ'ըլլէ և իսպառ անհետացնէ հայութեան մթնոլորտէն: Մեր նախնիքներու այս գուշակութիւնը դժբաղդաբար օր օր իրականութիւն գտնելու վերայ է:

Հայկական ընդհանուր կոտորածներէն առաջ երբ հայրենի երկրին մէջ կ'ապրէի, և Յիսուսեան (Ճիզվիթ) կրօնաւորներն ալ այդ կողմերը նոր կը հաստատուէին, ուշագրութեանս գլխաւոր առարկան դարձած էր մեր փոքրթիւ հայ կաթողիկ եղբայրներուն ու քոյրերուն տաք վերաբերումը դէպ ալ նորեկները որոնց ոչ լեզուն կը հասկնային և ոչ կարգացածին: Խեղճ հայ կաթողիկ եկեղեցականները կը լքուէին իրենց ծուխերէն և շատ անգամ եկեղեցին բոլորովին թափուր կը մնար, իսկ Յիսուսեան քեռերու մատուռը բազմութեամբ մը կը լեցուէր: Ես ալ սկսած էի իրենց կրօնական ամէն պարտականութիւն—աղօթք, խոստովանութիւն, հաղորդութիւն—հոն կատարել: Ի տես այս երևոյթին կը խորհէի թէ սա մեր պապական եղբայրները անգամ մը բաժնուած ըլլալով Հայութեան մայր զանգուածէն, անկարող պիտի ըլլան ինքզինքնին բռնելու ի կորուստ գահազլութիւն, նման հիմէն խախտած այն ժայռին որ շերկրաշարժի մը ցնցումին կը սպասէ թաւալազլոր խորխորատ իշալու համար: Այս տխուր մտածումն միջ պատահական խանդավառութեամբ զեզուն սրտիս մէջ անգուպ առեւտրութիւն մը կը օնանէր դէպի այդ ճիզվիթ մարտիրոսները, և արգահատանք մը մեր պապական եղբայրներուն ու քոյրերուն համար, որոնք անգիտակցաբար կը հեռանային մայրին օճախէն, հայութեան գիրկէն: Որքան որ այնչափ պէտք ունի իր որդւոց համախմբումին ու միութեանը:

Տխրահաշուկ Հասունէն յետոյ այս ճիզվիթ քեռերու և այլ տար կաթողիկ միաբանութիւններու մեր հայրենի երկրի ուղղելու եկած էր: արդէն ծանր հարուած մըն ալ տալու մեր կաթողիկ եղբայրներու ազգային գոյութեան: Բայց չէինք ըմբռնել թէ վատիկանը ինչ օգոտ պիտի քաղէր հայութենէ: Ուժացնելով զանոնք, սակայն այսօր Գոյունեան գերապաժառի պարգան կը լուսաբանէ վատիկանի միտքը, այն է հայ կաթողիկ հասարակութեան ինքնավարութիւնը բոլորովին քննել և բացառիկ միապետութեամբ վարել զանի իբրև ոչխարներու հօտ մը: Ինչպէս կերևայ, Պապը եւրոպայի մէջ իր կորուսած դիրքը կուզէ Արևելքի մէջ մեր եղբայրներու ուսին վրայ ամրացնել: Բայց կը թուի թէ կատարեալ յաջողութիւն չպիտի գտնէ վատիկանը սա քաներորդ դարու ազատաշունչ սքիզն օթափող հայ կաթողիկ մտաւորականութենէն:

Կը սպասուի որ բուն կերպով վանէ վատիկանի ոտնձգութիւնը և եթէ սա յաճառի, ըսէ իր վերջին խօսքը թէ «Հոռի, դու մեզ ինչ տուիր որ ինչ կուզես մեզ երբ մեր տէրը եթէ ոչ ունի մեր ազգային քահանայապետը և առաքելական Աթոռը: Ըմբռնող տացումի այս հեռապատկերը վերջապէս պիտի սքեցնէ վատիկանը, եթէ քիչ մը աւելի կորով և հաստատամտութիւն ցոյց տան մերինները»:

ԱՂԳԱՅԻՆ

Հայրենիք օրաթերթը կը հրատարակէ ցանկը Պոլսոյ Ս. Յակոբայ Որբանոցին մէջ պատուաւոր կարծեցեալ որբերուն: Այդ ցանկին մէջ իւրաքանչիւրին մասին տրուած բացատրութիւններէն կը տեսնուի որ այն որբ ըսուածները հայր կամ մայր կամ պապական ունեցող պատանիներ են, որոնց շատին պէտք չէ բուն որբերու համար տրուած հացը կերցնել: Թէ ինչպէս այդպիսիները ընդունուած են որբանոցին մէջ: Այն Եւհրիկեանի վարչութեան վերաբերեալ զեպարիք մըն է: Այդ կարծեցեալ որբերը որ անցեալ տարեւորջանին գնալով իրան ուսուցիչներու դաստիարակութեան շնորհիւ հայ լեզուն, հայ կրօնը թղթեցնելու հետ միանալու անգիտելի նկատելով, սկսած էին կուռի անոնց դէմ և անբարեյականութեան ճանքն բռնել: Այժմ կը վտարուին Որբանոցէն Ազգ. վարչութեան որոշումով: Եստ արդար որոշում:

Կեդրոնը Սօփիա դանտող Պապական պաշտօնէին ընկերութեան Պոլսոյ մասնաճիւղը կ'իլիկիոյ մէջ իր ապահովագրած և կոտորածի միջոցին այժմ չենք բոլոր արժէքը վճարելու դատաւարտութեամբ Պոլսոյ դատարանէն: Բայց այդ մասնաճիւղին տնօրէնը անձնասպան եղած և պաշտօնեաները ցրուած ըլլալով այժմ խեղճ հայ արկածեալները իրենց պահանջը դանձելու համար ահադին դժուարութեանց պիտի հանդիպին, քանի որ Պապական կեդրոնը թիւրքայէ գուրս կը գտնուի: Իսկ միւս ընկերութեանց դէմ բացուած դատը տակաւին չէ տեսնուած:

Սեզ. վարչութեան կէզմէ նախարարներուն ներկայացող պատգամաւորութիւնը Ս. Պատրիարքի հրաժարման խնդրոյ առթիւ ձեռնառնային ետ դարձաւ: Որովհետեւ նախարարները Պատրիարք արդար պահանջներուն գոհացում տալու տարտամ խոստումներ տրայն ըրին եւ Պատրիարքին պաշտօն

ին գլուխը անցնիլը յանձնարարեցին նաեւ իբր նշանակութիւն ունեցող բան մը նախարարը ըսաւ թէ Ասաֆին դատարարի վերաբնութի եւ անամթ կերպով աւելցուց թէ Ասաֆը արդէն Եւրոպա վախած է: Նախարարին ալ խօսքերուն մէջ ծածկուած լիբը հեքնութիւնը նոր Զպուցոյց մըն էր իրենց ալ մողակցութեան, բայց ինչ ըսէր խեղճ հայ պատգամաւորութիւն:

Որոշանայոց Առաջնորդները ըստ Պալատէնիայի կաթողիկոսին ուղղակի կանուանումին, խառն թեմականներու ընտրութեանը սպասելու: Հանդուցեալ Որբանոցի Հայրիկ կոնդակով մը ժողովուրդին ընտրութեան իրաւունքը հաստատած էր: Այս միջոցին խնդիր կը յուզուի Կովկասի մէջ թէ Ս. Ս. Մարթէոս կաթողիկոսը պիտի յարգէ ժողովուրդի ընտրական իրաւունքն: Մենք վստահ ենք թէ Նորին Ս Օծութիւնը ժողովուրդաւոր եւ ոսովաւարական գաղափարներով ոնած ըլլալով, անպտտածա ընարողական իրաւունքը չպիտի զրանայ ժողովուրդին, եթէ այդ ժողովուրդը մութ տարրերու եւ աղաւազաւ բորբապան դիսքներու ձեռքին մէջ կոյր դրոյրք մը չէ եղած:

Թրքախայստանի աղէտեալներուն օգնող Կովկասի հանգանակիչ Մարնաթողովը, ըստ յանձնարարութեան վեհ կաթողիկոսին որոշեց 3000 ռուպլի զրկել Պատրիարքական յոյուստ Ատանայի արկածեալներուն:

Պատրիարքարանը որոշած է Պալկարիոյ եւ Ռուսիայի հայոց հոգեւոր հովուի պաշտօնը յանձնել Տէր Գրիգորիս վրդ. Պալազեանի եւ անոր օգնական տուած է Ս. Յովհան քնն. Մանգակունի:

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ի Ք

Սիսական ընտանիքը եւ պարագաները իրենց խորհին չնորհակալութիւնը կը յայտնեն Տօպրիի ուսուցչական մարմնին եւ ամբողջ ուսանողութեան, եւ ամեն անոնց ոչ ոք յաւէտ ողբացեալ ՇԱՔԷ Սիսականի տխուր մահուան առթիւ իրենց ցաւակցութիւնը յայտնեցին անձամբ կամ գրով:

Տօպրի

22 նոյեմբեր

Խմբագրութիւնս եւս իր խորին վշտակցութիւնը կը յայտնէ Ն. Սիսական ընտանիքին, իր յոյս սիրեցեալ ծաղկաթի Շաքէին դառն մահուան առթիւ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ

(Հար. Ասիոյի քիւնի)

Կեդր. վարչ. Ժող. վր Միութեան
վարչութեան եւ պարտաւորութեան
մասին ամենաընդարձակ իշխանութեան
անց տէր է:

Մասնաւորապէս ամէն իրաւասութիւն
ունի՝ ընկերութեան նպատակին իր-
ազօրծման ծառայող ամէն զործ կատա-
րելու, Հիմնելու կամ նպաստով օժ-
տելու վարժարաններ, մատենադարան-
ներ, ընթերցասրահներ, արհեստանոց-
ներ, հիւանդանոցներ, խնամատուն-
ներ, որբանոցներ, եւ օրինչ նմանօր-
ինակ հաստատութիւններ:

Օգնելու եւ օժանդակելու ամէն հայու
առանց դաւանանքի խտրութեան
Հայագիւղ գիւղացիներուն նպաստելու
անոնց հայթայթելով հունտ, կենդանի
եւ մշակելի հողեր:

Գրեւորու մէջ մշակութեան վրայ
այժմուսը ընդհանրապէս գիտելիքները տա-
րածելու, տեղական արհեստագործ-
ութեանց զարգացումին նպաստելու
երկրին պայմաններուն համապատաս-
խան եղանակով աշխատութեան եւ
արգելաբարութեան նոր միջոցներ
ստեղծելու:

Սովէ, հրեանց կամ ուրիշ որեւէ աղ-
էքի կտմ պատուհասէ եւ կամ հա-
մաճարակէ արկածաւ վայրերու բնա-
կիչներուն օգնութեան հասնելու:
Ընդունելու կամ ոչ որեւէ նուիրատու-
ութիւն եւ կտակ:
Յօդ. 7ի մէջ նշանակուած հասոյթի
աղբիւրներէն զորս ուրիշ որեւէ
հասոյթի աղբիւր եւս ստեղծելու:

ՏԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Յօդ. 15. Ա. — Մասնաճիւղներու Տե-
ղական Ժողովներ կրնան կազմակեր-
պուիլ Կեդր. Վարչ. Ժողովին որոշմամբ
այն ամէն տեղ ուր Միութեանը ու-
նի գէթ տասը անդամ:

Կեդր. Ժողովը կ'որոշէ ու կը սահմ-
անէ իւրաքանչիւր Մասնաճիւղովի զոր-
ծողութեան շրջանակ: Միշտ եւ
հանապազ կարող պիտի ըլլայ ընդար-
ձակել կամ անձկացնել այդ շրջանակը
Բ.— Իւրաքանչիւր Տեղական Ժողովի
անդամներու ընտրութիւնը Կեդր. Վա-
րչ. Ժողովին վաւերացմանը կենթար-
կուի: Նորոգումը սոյն Ժողովին միջ-
ոցաւ կը կատարուի ընտրելիներու
կրկնապատիկ ցանկի մը վրայէն, որ
կը պատրաստուի նոյն շրջանակին
մէջ աշակերտ առնուաղն Բ. Դ. 35
անդամով ծար հատուցած 12 անդամներէ
բաղկացած Ժողովի մը կողմէ:

Գ.— Իւրաքանչիւր Մասնաճիւղովի
անդամներու թիւը առնուաղն 3 եւ
առաւելուն 7 պիտի ըլլայ ըստ բոլո-
ւան Կենդր. Վարչ. Ժողովին:

Յօդ Ա. — Մասնաճիւղովի, իրենց
շրջանակին սահմաններուն մէջ Մի-
ութեան նոր անդամ կը դնեն, կը
ջանան ասոնց թիւը աւելցնել, իրենց
տրամադրած ամէն միջոցներով անս-
ծաւալմանը կ'աշխատին, կ'ըզանձեմ
մօտքի տուրքերը ու բաժնեգէները
եւ նուիրատուութեանց զոյգացումին
ջանադիր կ'ըլլան նորընտիր անդամ-
ներու եւ նուիրատուներու անունները
եւ հասցէները պարտին ծանուցանալ
Կեդր. Վարչ. Ժողովին, որ անոնք կը
կրտարակէ պաշտօնական ցուցակնե-
րու միջոցաւ ըստ 14րդ Յօդ. Գ.
հաստատուած տրամադրութեան:

Բ.— Մասնաճիւղովիները պարտաւոր
են կանոնաւոր տնտեսականութիւն

մը անհնալ, եւ Գահիրէ Ընկերութեան
կենդանութեան զրկել զոյգացած դրա-
մները ամէն անգամ որ ատոնց գու-
մարը հազար ֆրանքի հասնի:

Իրաւունք չունին պորձածելու ոչ
մէկ գումար բացի մանր ծախքերու
համար հարկաւ որ եղած գումարներէն
ատոնց ամբողջութիւնը անդամով ծար-
ներուն 150/00 չանցնելու պայմա-
նով:

Ժ.— Իւրաքանչիւր վեցամսեայ
վերջը, պարտաւոր են Կեդր. Վարչ.
Ժողովին զրկել իրենց հոշիւները
իրենց շրջանակին վեճաբերաւ ամէն
խնդիրներու մասին պատրաստա-
տեղեկաշարքի մը հետ:

Դ.— Կեդր. Վարչ. Ժողովին առանց
նախապէս արտօնութիւն ստանալու
չեն կարող ընել որ եւ է ծախք, կամ
որ եւ է որոշում տալ եւ կամ յանձ-
նառութիւն մը կնքել: Պարտաւոր են
ամենայն ճշգրտութեամբ համակերպիլ
Կեդր. Վարչ. Ժողովին որոշումներուն
որ իրաւունք ունի Մասնաճիւղովիներուն
անդամները հրաժարեցնելու երբ ան-
նոնք պարտաւոր զտնութիւն եւ ա-
ռանց տեղ առժամայն յալորդներ կ'ս-
գիւր, մինչեւ որ վերորդեալ Յօդ. 15ի
մէջ նշանակուած եղանակաւ վերջ-
նական ընտրութիւն կատարուի:

(Հարտուակելի)

ՆԱՄԱԿ ՍԼԻՎԵՆԵՆ

Սիւլէն 19 նոյ. 1909

Մեծապատիւ Տեղ. Խմբագիր
Ձեր պատ. Թերթերունդ 42 համար
եւ 14 ամսաթիւ կրող թուոյն մէջ
կարդացիք Տեղ. Կարապետ քահանայ
Սահակեանի մի նամակն թաղականու-
թեան հանդէպ որն որ կը դան-
գաւէր առաւելելով թէ ձմեռուան
եղանակին զինքը ճամբայ դրած է
առանց իւր նիւթականը հոգալու:
Սրդարեւ չէր արժիք իսկ պատաս-
խանել այսպիսի գծուած զրպարտիչու-
թեան բայց ոչ միայն խորհաղոյոյ
այլ եւ գրէթէ ամբողջ քաղա-
քին հայ դաղութն ցաւ զղալուն
պտրտաւորեցանք ճշդել իրողութիւն
ներ:

Յիշեալ Բոնանան աւելց գրէթէ
15 տարի առաջ դարձեալ տեղս Գա-
հանայագործած է եւ զանազան
էնթրիքներ դարձուցած ըլլալով Ժո-
ղովուրդի մէջ երկպառակութիւն
յարուցած ու վերջապէս պաշտօ-
նադրի եղած է: Սոյն երկրորդ
տեղով թէ թաղականութեան եւ
թէ ան քահի առաջակտրդ անձնա-
ւորութեանց աղերսագիր մատուցած
ըլլալով եւ խոստանալով միանգամայն
իւր նախկին յոռի սովորութիւն.
ներէ զեղծ մնալն խնդրած է որ
որպէս անառակ որդի ներուր իրեն
դարձեալ ընդունուի տեղս քահա-
նայագործելու ու վերջապէս թաղա-
կանութիւնս կոտրուի զինքը պաշ-
տօնի կողմ իւր խոստմանց յենով
Այս անգամ եւս տէր Կարապետ
Գահանան ինչպէս գրէթէ ծանօթ
չառերուն իւր վարքովը ու բար-
քովը... մեծամեծ սխալներ գործած
ըլլալով զորս չենք ուզեր մի
առ մի հոս թուել զտնոնք քա-
հանայավայել չըլլալով կղերի մը
պատիւ չը բերելուն վեր
ջապէս պաշտօնէ դադրեցուցիք զին
քըզայթաղութիւն չըլլալու առաջ
եւ ինչպէս օրէջք է ձ ամիս եւս
պայմանաւժամէ տրուեցաւ ժամանա-
կամիջոցին մէջ ուրիշ յարմար
թիւ մը զտնելու իրեն, միեւնոյն

ժամանակ պատրիարքարանը զրկու-
եցաւ թաղականութեան կողմէ թէ
իրեն հրամարելու եւ թէ նորեկ
քահանայի մասին անոր եւ մեր
մէջ եղած պայմանն'ը: Տեղ.
Կարապետի կրկնակի աղաչանքներուն
սւ թախան ձանքներուն չգիտնալով
վկայագիր մը եւս տրուած է իրեն
իւր խեղճ ընտանեաց իւրականը
մտածելով որոնց Թաղականութեան
պատճառը նոյն իսկ ինք իղած է
միշտ:

Թաղականութիւն հայիւները
մաքրած ըլլալէ չինի բացառաբար
իւր խեղճ ընտանեաց նիւթական
անձուկ վիճակը ի նկատի առնելով
հանգանակութիւն մը եւս ստեղծած
է որով կնկիկ գումար մը իրեն
յանձնած եւ վերջ ի վերջոյ ճանա-
պարտութիւն սը եւս հոգացած է
որսւն հանդէպ ինքնալ թէ գրա-
ւոր եւ թէ բերանացի դոհունա-
կութիւն յայտնած է մեզ

Կը լսենք որ դեռ չը մէկնած
քաղաքէս Պուլ. Առաջնորդէն ալ
(չենք գիտեր ինչ ձեւի տակ)
կրորիկ գումար մէջ շարժած է:
Դր շիտակը ըսելով կը հեռուցենք
թէ Ազգի մը պատիւը պահել եւ
կամ ծանցալը Տեղ. Կարապետի հա-
մար չէ:

Աւաղ որ այսպիսիք քահա-
նայութիւնը իրենց շահու աղբիւր
մը ըրած ըլլալով անոր առնու-
կտրաւորեն սեւ մուր քսելով ա-
նոր ճակտին կզողաւցնէք մենք
եւս մեր պաշտօնակիցները սր այս-
պիսի քահանաներ պահելէ զոյշ
ըլլան որոնք արդէն հոգեւոր հայր
կոչուելէ շատ հեռի են:

Աւրեմն համառոտակի կերպով կր-
ցանք լուսաբանել խնդրոյն նշու-
թիւնը եւ չենք կարծեք որ թա-
ղականութիւնս սխալ քալ մը առած
ըլլայ յիշեալ Տեղ. Կարապետ քահա-
նայի նկատմամբ:

Ի դիմաց թաղականութեան
Ս. Սփետանեան Յիշեցույ Հայոց
Առնապարտ Առնապարտ
Ա. Փափագեան Ա. Խ. Բագլաեան

ԷՐԶԻՆԻ ԲԱՆՏԻՆ ԽՈՐԷՆ

ՆԱՄԱԿ ՄԸ

Հոս նպատակ չունիմ երկարօ-
րէն պատմելու թէ ինչպէս Ձաք-
Մարդուանցիքս մեր կարողու-
թեան չտիւղի, զրեզ եւ շրջակայ
քանի մը գիւղեր ազատեցինք՝
դիմելով ինքնապաշտպանութեան
Բանի որ թերթերը մանրամաս-
նօրէն գրեցին ամէն բան. պիտի
գրեմ այն անարդարութեանց
դէմ որ ի դործ դրուեցաւ մեզի
հանդէպ եւ կը շարունակուի սա
պատճառաւ որ Էրիչու մենք ալ
չիմեռնեք: Այլ երանի թէ մե-
ռած ըլլայինք փոխանակ այժմ
ամէն օր մեռնելու անչուշտ այն
ատեն քարերը պիտի աղաղակե-
ին...:

Վիճակնիս անտանելի է, բանտէ
ի բանտ քաշկոտեցին, ծեծեցին,
սպառնացան ալ չիմնաց չարիք
որուն չենթարկուէինք, իսկ այժմ
քեզի կը գրեմ իրզինի մահահոտ
բանտէն, խոնաւ աղտոտ, մութ
զնեան մը որուն մահահոտ մըթ.

նորորտը միանալով անարդարու-
թեանց եւ տանջանքներու կեան-
քի գոյութիւնը անկարելի կը-
նեն: Ձիս կ'ամբաստանեն իբր
սպաննիչը երկու հայ լրտեսնե-
րու, որոնք ջարդի օրերուն հայ
ինքնապաշտպան ամբիսին կողմէ
սպաննուեցան քարերով ու փայ-
տերով, մինչդեռ իբր հակառա-
կութիւն քանի մը սուտ վկայե-
րու իփառելով զիս յանցաւոր հա-
նեցին եւ կախաղանի ու յրահ
բերդարգելութեան վճիռները
մեր ազգու բողոքներով ետ առ-
նուելէ վերջ այժմ դատապարտու-
ցայ 3 տարի տաժանակիր աշխա-
տութեան. ահա այն աղատու-
թիւնը զոր փութացի վայելիլ
Թուրքիոյ մէջ... Մինչեւ վեր-
ջին դատապարտութեան 56 ան-
գամ հիշեքի քանդակի առջեւ
հանուեցայ, ամէն անգամուն
3—4 ժամ դատուելով սպառնա-
լիքի ներքեւ, որոնք սակայն որ
եւ է երկիւղ չէին կրնար ազդել
իմ վրայ՝ քանի որ յետին շունչս
ճշմարտութիւնը խօսելու որոշում
տուած էի: Պատեալաւորտն Ատ-
եանի Ատենապետը օր մը զիս իր
մօտ կանչելով սապէս խօսեցաւ.
— Բոլոր պատիժք կամ կախողան,
կամ ցմտհ բերդարգելութիւն է,
պատուոյ վրայ կերպնում քեզ
ազատել թէք քանի մը աղանե-
րու նկատմամբ իփառել տաս եւ
ըսես որ անոնց միտքը կիլիկեան
թագաւորութիւն մը կաղմել էր,
սակայն չի յալոյեցան: Առանց
կարկամելու սո պատասխանը
տուի.— Ձարմանալի է որ հայ
աղբիւր իրաւունքները ոչչացնե-
լու համար ինչ միջոցներու դի-
մելիդ դուք ալ չէք գիտեր:
Հայերը այդ տեսակ ու է մտա-
դրութիւն չեն ունեցած, եւ այս
աղէտներուն բոլորին պատճառն
ու պատասխանատուն կառավա-
րութիւնն է: Կը նախընտրեմ
կախաղան բարձրանալ քան թէ
ազգիս իրաւունքները ստքի տակ
առնուլ եւ մեծ ցաւ կըզգամ որ
դուք ալ այսպէս արդարութեանէն
կը չեղիք: »

Բաշան կասկարմիր կտրած ինչ
ըսելը չիգիտցաւ ու չորս սուրնա-
ւոր զինուորներով զիս բանտ
ղրկեց: Ահա սիրելիս, մեր հի-
մակուան խղճալի վիճակը, Թուր-
քիոյ աղատութեան հանդէպ մեր
ջանքերուն իբր վարձատրութիւն
բանտի մութ խորչերուն մէջ օր-
երեկս կը համբոնք, երեք օրէ
իվեր ձեռքիս եւ ոտքերուս չլթա-
ները քակեցին եւ սակայն ոչ
ոյժ ու կորով մնացած է բոլորս
ոչ ալ յոյս: Հաճենի հինգ մահա-
պարտներն ալ ինծի հետ նոյն
թունաւոր օգը կը շնչեն...:

Մեզ հանդէպ գործադրուած
անարդարութիւնները ընկճած
են մեզ՝ որովհետեւ համբերելու
քաջութիւնն ալ իր որոշ չափն
ունի եւ արդէն մեր բաժակը յոր-
դած է, ուստի յուզահատական


միջոցներու իբր վերջին ճիգ, կը խնդրեմ իբր եղբայր հրատարակէք թերթերու մէջ և հանուր Արտասահմանեան Հայութեան կողմէնք մեզ բարոյական օգնելու և կառավարութեան գէժ միջոցներով մը բողոք բառնալու: Պատրիարքարանը անգոր է, հապարաւոր թաքրիրներ ու հեռագիրներ ի դուր զոկուեցան, միշտ լռութիւն միշտ պաքարը, մինչ կրկնական մութ անկիւններու մէջ ընդհանուր ջարդէն յետոյ յամր ալ յարատեւ նախնիները կը շարունակուին: Ինծի դէժ գործուած անարդարութեան և 3 տարւոյ դատապարտումիս առթիւ կուսակալին և Պատրիարքարան զոկած քաքրիքիս օրինակը քեզ ալ կը զրկեմ հայերէնի թարգմանելով: Էլուսարեր—Ա. և ի զրկէ նամակիս պատճէնին հետ:

Կ'իմանանք որ Դաշնակցականներն ալ եղբարութեան Դաշինք կապած են այս տեսակ կրօնամոլ ազգի մը շովին քօթիթէին հետ, մինչդեռ ամենուս ալ յայտնի է և փաստերով կրնամ ապացուցանել որ կիլիկեան արհաւիրքը ուղղակի Մ. և Յ. Բօթիթէի կողմէն ծրագրուած ու սարքուած է: Տեղւոյս Բօթիթէի նախագահ Իմամ պէկ զատէ Մուհամմէտ պէյն էր որ թուրք խուժանին առաջնորդելով Հոյրիյէի իսթէյէն կեաւորարար մէյտանա լըգարն կը պոռար, այսօր միւսնոյն օճը Աղատութեան գրօշմը կուրծքին ճեւաւաւն Հոյրիյէի կը պոռար, ձակ համարձակ իր կողոպտած տրվնոտ խրախճանքը վայելելով, մինչ մենք ջարդէն մազապոք վերապրած խեղճերս բանտերու ծոցը դառնութեանց ստինքը կը քամենք մեր ընկճուած հոգիներէն ներս:

Ահա համառօտ խղճալի վիճակ սիրելիս գալ բաթային աւելի մանրամասն պիտի գրեմ: Մագս մորուքս երկարած ոչիլներու մէջ կը խղզուիմ: Աստուած օգնութեան հասնի:

(Էլուսարեր—Արեւ) Միւհամմէտ

ՈՐԲԱԽՆԱՍ ԳՈՐԾԸ



Վառնայի Թաղ խորհրդոյ նախագահութեամբ հանգանակութիւնը կապած է քաղաքիս մէջ ի նպատակ կիլիկիոյ որբերուն: Որչափ որ ալ գովելի ըլլայ այս ձեռնարկը, հիմաւոր գործ մը չէ: Պէտք է շարունակական կամ տեւական հանգամանք մը տալ որբտնիւմ գործին: Հայաստանի ընդհանուր կոտորածներէն յետոյ Վառնան աստիճան մը իր պարտականութիւնը կատարեց 5—6 տարի շարունակ 10 15 որբեր


պահելով Հայաստանի զանազան որբանոցներուն մէջ, այսինքն մինչև իր որբերգրած որբերուն չսփռնաւ ըլլալը զանոնք չը լըքեց Այս տեւական բարեգործութիւնը կը պարտինք գլխաւորապէս որբատնիւմ ընկերութեան մէկ քանի վարեչներուն, Խ. Աղնաւորեան, Ճանկիւլեան և այլն: ուրք այսօր կը բացակային քաղաքէն, բայց տակաւին հոս կը գտնուին նոյնչափ անձնուէր և բարեսէր ազգայիններ, որոնք, կը սպասուի որ, յառաջ նետուն կրկին որբատնիւմ ընկերութիւն մը վերակազմուի: Թաղ խորհրդոյ անցողակի հանգանակութիւնը այս տեւական ձեռնարկութիւնը ընելու արգէլք չէ բնաւ:

Ուրիշ կարգ մը ազգայիններ ալ աւելի հաստատուն աւելի սիրտեմարիք ազգային հաստատութեան մը ճիւղը կուղեն հաստատել հոս: այն է Գահիրէի Հայ. Բարեգործ. Ընդհ. Միութեան մասնաճիւղ մը հիմնել:

Ութ տասը օրէ ի վեր այս միտքը շրջան կրնէ քաղաքիս էսմաք դատարարին մէջ, բայց որովհետեւ Հ. Բ. Ընդհ. Միութեան հիմնարկութիւնը եղած է վերէն, ազնուապետական կամ ջոշ դատակարգէն թէ՛ եգիպտոսի մէջ և թէ՛ ուրիշ կարգ մը տեղերից սպասուի որ այս կողմերն ալ մասնաճիւղեր կազմուին նախագահութիւնը նոյն ջոշ դատակարգէն ըլլայ, որպէս զի գործը աւելի վստահութիւն ներշնչէ և աւելի արդիւնաւոր լինի: Ծառաթէ մը ի վեր է որ այդ չլուկին կը սպասուի, բայց աւաղ սր մինչև սոյն տողերը գրած վարկեանս ու է ձայն չլուեցաւ այդ ջոշ ըսուած կամ կարծուած մարդոցմէ: Սակայն էսմաք անուանող կամ օրը վստակող և օրը ուսող հայ ժողովուրդէն մասմը, ալ վերջ տալով իր սպասողական դիրքին, պիտի ձեռնարկէ գործի և հիմը պիտի դնէ Հ. Բ. Ընդհ. Միութեան վառնայի Մասնաճիւղին:

ԱՐՁԱԳԱՆՔ

ԹՈՒՐԿԻՈՅ ԴՈՐԾԵՐԷՆ



Մերակոյտը անցեալ օրուտն նիստին մէջ, որչեց զեկուցանել կառավարութեան թէ ասկէ վերջը որ եւ է մենաշնորհ չի կրնար տրուիլ առանց Խորհրդարանէն վաւերանալու: Տիգրիսի ու Եփրատի նաւագնացութեան մենաշնորհը աւակաւին վերջնականապէս տրուած չըլլալով կըսէ Օսմանիյէի Լոյս, նախարարաց Խորհուրդը հիմակունէ անձեռնհաս և բանակցութիւն:

ներք ի զլուսն հանելու և պայմանագրութիւնը կայս վաւերացման ենթարկելու: Ուրեմն Դահլիճը պիտի հարկադրուի յաճառութեան Զտեւորը և միւս դրութիւնները զրկել Խորհրդարանին ուր խնդրը նորէն պիտի քննուի ուրիշ բան եթէ հիւսէին Հիմնափաշա այդ պարագան սկզբունքի խնդրի մը չընէ յառաջիկայ հարցապնդումին ատեն ՊՈՒԼԿԱՐԻՈՅ Ֆէրտիւնանտ Թագաւորին մօտեւա Կ. Պոլիս այցելելը անհաւանական չի նկատուի: Այդ այցելութիւնը մասնաւոր հանգամանք մը ևս չէ, որովհետեւ մը պիտի ունենայ պալլաքանեան սլաւ Պետութեանց դաշնակցութեան ծրագրին հետ Թուրքիոյ և Պոլկարիոյ յարաբերութիւնները նորէն բարեկամական հանգամանք ստացած են բոլոր թիւրիմացութիւնները անհետացած ըլլալով:

ԼՐԱԳՐԻ ԴԱԿԱՐԱՆԻՍ, —Անշի օրը հրատարակուի սկոռած փառալուրդը զինուորական ատեանին որոշմամբ անպայման կերպով դատարան դատապարտուեցաւ վասն զի մտքերը դրգը և ներկայ վիճակին անյարմար հրատարակութիւններ ըրած:

—Պարսի ընդհանուր բնուկչութեան անունով Պոլսոյ թերթերուն մէջ կը տեսնուի հեռագիր մը որով Պարսիքը կը բողոքեն Սպանիոյ կառավարութեան դէմ Ֆէրէրէի մահապաշտ առթիւ: Եւ հեռագիրը կըսէ «Սպանիան տոով անգամ մըն ալ հաստատեց թէ քաղաքակիրթ ժողովրդոց մէջ տեղ ունենալու արժանի չէ»:

Հապա այդ Պարսիքը ուր կը գտնեն այն կառավարութիւնը որ Ատանայի ջարդերը կազմակերպեց և բուն ոճրապարտները ազատ արձակելով, քանի քոնի անմեղներ դատապարտեց և կախաղան բարձրացուց:

ՀԱՅ ԵՐԵՎԱՆԻՆԵՐՆ ԵՒ ՕԾՄ. ԲՕՄԻԴԷՆ. — Սապահի մէջ կը կարդանք. — Է՛յայ յարգելի երեսփոխաններն անցեալ օր նիստ դուժարելով որոշեցին իրենց բոլոր ոյժով օժանդակ հանգիստնալ Մ. և Յ. կուսակցութեան: Դարախութեամբ կ'իմանտք թէ Հայ երեսփոխանները մեծապէս կը փափաքին որ Մ. և Յ. կուսակցութիւնը զօրաւոր և կանոնաւոր կուսակցութիւն ըլլայ, և իրենց ընկերներուն ծանուցին թէ այս տեսակետով պիտի ընծայեն հարկ եղած օժանդակութիւնը: Այս լորը սխալ կը թուի:

—Սրանպոյի Հալէպի թղթատէր մեծ դովեսաով կը խօսի նոր Հայ երեսփոխանին, Յարութիւն էֆ. Պօլկէզէնեանի վրայ իբր պարկեշտ և աղատական անձնաւորութիւն որ կուզէ դատա-

կան բարենորոգում և դատաւարութեան եղանակի բարեփոխում: Գրիստոնեայք իրենց բոլոր քաւենքը միացուցեր են Հայ երեսփոխանին անուան վրայ: Յարութիւն էֆ. 46 տարու է. բնիկ Այնթապցի, և Հալէպ դասած է եղեր է 1895 ջարդին:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Սօփիա 23 Նոյեմ.

Պուլկար նախարարաց Սօփիա, նիլի մէջ արտասանած ճառերուն հետեւանք թուրքիոյ և Պուլկարիոյ մէջ առաջ եկած վէճը գոյունեցաւ:

Թուրքիոյ և Պուլկարիոյ մէջ վաճառականական յարաբերութիւնները ուսումնասիրելու պաշտօն ունեցող թուրք յանձ. նախաւորին մատուցած տեղեկագիրը այժմէն իսկ 100 ին 11 մաքս առնելու անհրաժեշտութիւնը կը մատնանչէ պուլկարական ապրանքներուն համար, քանի որ Պուլկարիան անկախութիւն հրատարակած ըլլալով երկու կառավարութեանց մէջ կանխաւ կնքուած առևտրական պայմանագիրը չնշուած եղաւ եթէ տեղեկագրին այս կէտը Դուռը ընդունէ, անկասկած թրք. — պուլկար յարաբերութիւնը կրկին պիտի ձգտի:

Իրաց այս վիճակին հակառակ Պոլսոյ պուլկար դեսպանը Մ. Սարաֆով, որ ուսուսէր մըն է, սկսած է ժամանակէ մը ի վեր բանակցութիւններ կատարել Բ. Դրան հետ Պալքանեան Դաշնակցութիւն մը կազմելու նպատակաւ, զոհացում տալու համար համալսական ծրագրներու: Կըսուի թէ թուրքերը այս զաւափարին կուսակիցեն պայմանաւ որ Թուրքիան այդ Դաշնակցութեան մէջ առաջին գերակատարը ըլլայ այնպէս որ Պուլկարիան երկրորդ զծին վրայ մնայ: Այս առաջարկութիւնը վճռապէս մերժուած ըլլալով Պուլկարիոյ կողմէ՛ որ կուզէ հասարակ աստիճանի վրայ ըլլալ բանակցութիւնները առայժմ անհետեւանք մնացին:

Այն կարծիքը կայ թէ եթէ Տէմոկրատ կուսակցութեան երեսփոխաններէն մէկ մասը կրկին շարունակէ կառավարութեան դէմ գործել Սօփիանիէն մէջ նախարարապետ Մ. Մալինոյ վը պիտի ստիպուի դահլիճին հրաժարականը տալ և քաշուի:

Դանուբին վրայ կամուրջ չի նկու բանակցութիւնը ընդհատուած էր ժամանակէ մը ի վեր այժմ երկու կողմէն ալ եւանդով սկսուած է բանակցութեան և յոյս կայ թէ քիչ ատենէն ի ականանայ գործը:

